## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.10.2025թ. N 374/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.11.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ջ.Աղաջանյանը, Ս.Ավագիմյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1.«ԼաննԱր Սերվիս» ՍՊԸ-ն (ք.Երևան, Բաբաջանյան 163/13)

2.«Իքս-Արթ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Հր.Քոչարի փող. 13/1)

3. «ՎԱԼԵՆՍԻԱ ԱՅԹԻ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Բուզանդ 15, Ռամադա հյուրանոց, 307 սենյակ)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | նախահաշվային ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱՀ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «ԼաննԱր Սերվիս» ՍՊԸ | Հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ | 10 176 210 | 20% | 12 211 452 | **12 335 100** |
| 2 | | «Իքս-Արթ» ՍՊԸ | | 10 279 000 | 20% | 12 334 800 | |
| 3 | | «ՎԱԼԵՆՍԻԱ ԱՅԹԻ ՍՈԼՈՒՇԸՆՍ» ՍՊԸ | | 13 000 000 | 20% | 15 600 000 | |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

## 5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գինը՝ «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
3. ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-25/5 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ -ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Զ.Աղաջանյան

Ս.Ավագիմյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան